



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
 հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
 հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
 էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 հունվարի 2022 թվականի N 1 - Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՄՐԱՎԱՆ
ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՀՈՂԵՐԻՑ 0,9781 ՀԵԿՏԱՐ (4-ՐԴ ԿԱՐԳԻ ԱՐՈՏ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 08-054-
0103-0008) ՔԱՂԱՔԱՑԻ ՏԻԳՐԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշմամբ սահմանված կարգի 6-րդ կետով և հաշվի առնելով քաղաքացի Տիգրան Գուրգենի Պետրոսյանի 2022 թվականի դեկտեմբերի 29 -ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Կարմրավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 0.9781 հեկտար (4-րդ կարգի արոտ, կադաստրային ծածկագիր՝ 08-054-0103-0008) 3 տարի ժամկետով, տարեկան 2040 (երկու հազար քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ վճարով օգտագործման տրամադրել քաղաքացի՝ Տիգրան Գուրգենի Պետրոսյանին (նույնականացման քարտ՝ 008099590, տրված՝ 22.07.2016թ., 064-ի կողմից):

2. Քաղաքացի Տիգրան Գուրգենի Պետրոսյանի կնքել արոտից օգտվելու պայմանագիր:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ՝ՄԱՆՈՒԿՅԱՆ**



2023 թվականի հունվարի 3
 գյուղ Աշոցք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք, գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 հունվարի 2022 թվականի N 2 - Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՊԱՐՈՒՅՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ, ՌՈՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ
ԵՎ ՎՈԼՈՂՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ, 08-064-012-006-1 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ
ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով 2022 թվականի հունվարի 5-ին Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված Պարույր Հովհաննիսյանի դիմումը, **որոշում եմ.**

քաղաքացիներ Պարույր Հովհաննիսյանին, Ռոման Հովհաննիսյանին և Վոլոդյա Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Սարապատ համայնք, գյուղ Հարթաշեն, 1-ին փողոց, 1-ին նրբանցք, բնակելի տուն 16, հասցեում գտնվող, 08-0064-012-006-1 կադաստրային ծածկագրով բնակելի տանը /գրանցված՝ 2005 թվականի մայրսի 11-ին, վկայական N 1263142/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Հարթաշեն, 1-ին փողոց, 1-ին նրբանցք, բնակելի տուն 16:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**



2023 թվականի հունվարի 5
գյուղ Աշոցք